



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

### «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ն ընդդեմ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 5497/17)

#### ՎՃԻՌ

Հոդված 10 • Տեղեկություններ ստանալու և տարածելու ազատությունը • 1994-2014 թթ. ընթացքում Հայաստանի զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ դիմումատու ՀԿ-ին ներպետական իշխանության մարմինների կողմից տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելն ազգային անվտանգության հիմքով • Պահանջված տեղեկությունների՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդրի վերաբերելը • *Ratione materiae* (առարկայական իրավագործության առումով) համապատասխանությունը • Ներպետական դատարանների կողմից համաչափության սկզբունքի վերաբերյալ որևէ վերլուծության չմասնակցելը և վիճարկվող միջամտությունն արդարացնող համապատասխան և բավարար պատճառներ չներկայացնելը

Կազմվել է Քարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր չէ:

#### ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

4 դեկտեմբերի 2025թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*





«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ն ընդդեմ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

**«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Հինգերորդ բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Կատերինա Շիմաչկովա [Kateřina Šimáčková]՝ *Նախագահ,*

Մարիա Էլոսեգի [Maria Elósegui],

Գեորգիոս Ա. Սերդիդես [Georgios A. Serghides],

Ջիլբերտո Ֆելիչի [Gilberto Felici],

Անդրեաս Ջունդ [Andreas Zünd],

Դիանա Սարկու [Diana Sârcu]՝ *դատավորներ,*

Աննա Մարգարյան [Anna Margaryan]՝ *ad hoc* [Ժամանակավոր] *դատավոր,*

Էլ Վիկտոր Սոլովեյչիկ [Victor Soloveytchik]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն հայկական «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության (թարգմանաբար՝ «Peace Dialogue», դիմումատու ՀԿ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 5497/17),

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ բողոքի մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու վերաբերյալ որոշումը,

Հայաստանի համար ընտրված դատավոր պրն Վահե Գրիգորյանի կողմից գործի քննությանը մասնակցելուց հրաժարվելը (Դատարանի կանոնակարգի 28-րդ կանոն) եւ տկն Աննա Մարգարյանի՝ որպես *ad hoc* դատավոր (Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ կետ եւ Դատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 1-ին կետ) նշանակումը,

կողմերի դիտարկումները,

2025 թվականի նոյեմբերի 12-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,  
կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Գործը վերաբերում է ներպետական իշխանության մարմինների կողմից դիմումատու ՀԿ-ին 1994-2014 թթ. ընթացքում Հայաստանի զինված ուժերում զբանցված մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելուն: Դիմումատու ՀԿ-ն հիմնվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա, քանի որ խնդիրը վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքին:

### **ՓԱՍՏԵՐԸ**

2. Դիմումատու ՀԿ-ին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Մ. Շուշանյանը եւ պրն Ս. Գրիգորյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է կառավարության լիազոր ներկայացուցիչ, միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործի փաստերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

5. Ըստ իր կանոնադրության՝ դիմումատու ՀԿ-ն հիմնադրվել է 2009 թվականին՝ մի շարք այլ նպատակների թվում Հարավային Կովկասում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը նպաստելու, քաղաքացիական հասարակության դերն այդ ուղղությամբ ընդլայնելու եւ այդ գործընթացում կանանց, երիտասարդների եւ հակամարտություններից տուժածների մասնակցությունն ապահովելու, ինչպես նաեւ հակամարտության մեջ ներգրավված տարբեր տարածաշրջանների անձանց միջեւ երկխոսությանը նպաստելու եւ հակամարտությունից տուժած անձանց շահերը ներկայացնելու

միջոցով նրանց աջակցելու նպատակով:

6. 2012 թվականից սկսած դիմումատու ՀԿ-ն ներգրավված է եղել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում, մասնավորապես՝ խաղաղ պայմաններում մահացած զինծառայողների ընտանիքներին իրավաբանական օգնություն ցուցաբերելու, զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ հանրային իրազեկումը բարձրացնելու, ինչպես նաև բանակում տեղի ունեցած մահվան դեպքերն ու հանցագործություններն արձանագրելու միջոցով:

7. 2013 թվականից սկսած դիմումատու ՀԿ-ն իրականացնում է «Ապահով զինվոր՝ անվտանգ Հայաստանին» անունով ծրագիր, որի շրջանակում ստեղծվել է տվյալների առցանց բազա («Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» անվանմամբ), որը պարունակում է տվյալներ զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի եւ հանցագործությունների վերաբերյալ եւ ունի միջադեպի/հանցագործության ամսաթվի/վայրի եւ մահվան պատճառի մուտքագրմամբ որոնման հնարավորություն:

8. 2013 թվականի ապրիլի 3-ի գրությամբ դիմումատու ՀԿ-ն Պաշտպանության նախարարությանը տեղեկացրել է, որ «Ապահով զինվոր՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակում նախատեսում է մշտադիտարկում իրականացնել զինված ուժերում մահվան դեպքերի քանակի վերաբերյալ եւ ստեղծել այդպիսի միջադեպերի մասին տեղեկություններ պարունակող հանրամատչելի առցանց բազա: Այդ կապակցությամբ դիմումատու ՀԿ-ն Պաշտպանության նախարարությանը խնդրել է իրեն տրամադրել տեղեկություններ 2010-2011 թվականներին զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի քանակի վերաբերյալ, այդ թվում՝ տրամադրել զոհվածների անունները, միջադեպերի տեղի ունենալու ամսաթվերը եւ վայրերը, համապատասխան գորամասերի համարները (եւ այդ գորամասերի հրամանատարների անուններն ու զինվորական կոչումները), մահվան դեպքերի պատճառները, ինչպես նաև յուրաքանչյուր միջադեպի հակիրճ նկարագրությունը:

Դիմումատու ՀԿ-ն նշել է, որ նպատակ է ունեցել պարզելու քննարկվող ժամանակահատվածում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ Պաշտպանության նախարարության կողմից հրապարակված պաշտոնական տվյալների եւ նույն ժամանակահատվածի համար դիմումատու ՀԿ-ի կողմից այլ աղբյուրներից հավաքագրված տվյալների միջեւ առկա անհամապատասխանությունները:

9. Ի պատասխան այդ գրությանը՝ 2013 թվականի դեկտեմբերի 6-ին Պաշտպանության նախարարությունը՝ i) պարզել է դիմումատու ՀԿ-ի կողմից հավաքագրված տվյալներում առկա որոշ անճշտություններ, եւ ii) տրամադրել է լրացուցիչ տեղեկություններ քննարկվող ժամանակահատվածում զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ՝ տրամադրելով 2010-2011 թվականների ընթացքում զոհված զինծառայողների, ինչպես նաեւ դիմումատու ՀԿ-ի կողմից ներկայացված ցուցակում չընդգրկված անձանց անունները, ծննդյան տարեթվերը եւ նրանց մահվան պատճառները:

10. 2014 թվականի հունվարի 21-ի գրությամբ դիմումատու ՀԿ-ն հարցում է ուղարկել Պաշտպանության նախարարություն՝ խնդրելով իրեն տրամադրել այնպիսի տեղեկություններ 2007-2009 թվականների համար, ինչպիսի տեղեկությունների համար այն հարցում էր ուղարկել դեռեւս 2013 թվականի ապրիլի 3-ի գրությամբ (տե՛ս վերելում՝ 8-րդ պարբերությունը):

11. 2014 թվականի փետրվարի 14-ի գրությամբ Պաշտպանության նախարարությունը մերժել է դիմումատու ՀԿ-ի հարցումը՝ հղում կատարելով Սահմանադրության 23-րդ հոդվածին (անձնական կյանքի իրավունք. տե՛ս ներքեւում՝ 23-րդ պարբերությունը), նախկին Քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածին (նախնական քննության տվյալների գաղտնիություն. տե՛ս ներքեւում՝ 25-րդ պարբերությունը), «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին (տե՛ս ներքեւում՝ 29-րդ պարբերությունը), «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածին (տե՛ս ներքեւում՝ 35-րդ պարբերությունը) եւ ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի

13-ի թիվ 173 որոշմանը (տե՛ս ներքեւում՝ 37-րդ պարբերությունը):

12. 2014 թվականի հոկտեմբերին Վարչական դատարանը մերժել է դիմումատու ՀԿ-ի հայցը, որով այն ձգտում էր պարտավորեցնել Պաշտպանության նախարարությանը տրամադրել պահանջվող տեղեկությունները՝ այն ճանաչելով որպես վարչական բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետում չներկայացված բողոք: Անհաջող բողոքարկումից հետո դիմումատու ՀԿ-ն այլևս չի բողոքարկել:

13. 2014 թվականի նոյեմբերի 7-ի գրությամբ դիմումատու ՀԿ-ն հարցում է ուղարկել Պաշտպանության նախարարություն՝ խնդրելով իրեն տրամադրել նույն բնույթի տեղեկություններ 1994-2014 թվականների համար. գրությունը նման էր 2013 թվականի ապրիլի 3-ին եւ 2014 թվականի հունվարի 21-ին ուղարկված գրություններին (տե՛ս վերեւում՝ 8-րդ եւ 10-րդ պարբերությունները): Դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ վերոնշյալ ծրագրի շրջանակում այն հավաքել եւ հրապարակել է տեղեկություններ 1994 թվականի հրադադարից հետո գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ (տե՛ս *Չիրագովը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [ՄՊ] [*Chiragov and Others v. Armenia* [GC]] գործը, թիվ 13216/05, § 24, ՄԻԵԴ 2015): Ըստ դիմումատու ՀԿ-ի՝ տվյալ պահին (2014 թվականի նոյեմբերի 7) տվյալների հանրամատչելի բազան պարունակում էր տվյալներ (որոնք հիմնված էին մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններից եւ գոհվածների ընտանիքներից ստացված տեղեկությունների վրա) խաղաղ պայմաններում գոհված ավելի քան 600 զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ: Սակայն տվյալների առցանց բազայի օգտատերերի համար ամբողջական եւ օբյեկտիվ տեղեկություններ տրամադրելու նպատակով անհրաժեշտ էր ապահովել պաշտոնական տվյալներ մահվան քննարկվող դեպքերի վերաբերյալ: Եթե Պաշտպանության նախարարությունը քննարկվող ժամանակահատվածի որեւէ տարվա ընթացքում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ չուներ ամբողջական տեղեկություններ, ապա դիմումատու ՀԿ-ն խնդրում էր իրեն տրամադրել տեղեկություններ մահվան այն դեպքերի

վերաբերյալ, որոնց վերաբերյալ նախարարությունն ուներ տեղեկություններ:

14. Այդ հարցմանը պատասխան չստանալով՝ 2015 թվականի հունվարի 17-ին դիմումատու ՀԿ-ն հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Պաշտպանության նախարարությանը տրամադրել պահանջվող տեղեկությունները («Թիվ 1 վարչական վարույթ»): Ի հիմնավորում իր կողմից ներկայացված հայցի՝ դիմումատու ՀԿ-ն հղում է կատարել իր կողմից Պաշտպանության նախարարություն ներկայացված վերոնշյալ հարցման մեջ նշված նույն նպատակներին:

Այնուհետև դիմումատու ՀԿ-ն լրացում է կատարել իր հայցում՝ հավելելով, որ Պաշտպանության նախարարության կողմից իր հարցումն անպատասխան թողնելը չէր կարող համարվել հիմնավորված՝ հաշվի առնելով, որ Պաշտպանության նախարարությունն արդեն իսկ տրամադրել էր նույն բովանդակությամբ տեղեկություններ 2010 եւ 2011 թվականների համար (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը):

15. 2015 թվականի օգոստոսի 12-ին Պաշտպանության նախարարությունն իր առարկություններն է ներկայացրել դիմումատու ՀԿ-ի հայցի վերաբերյալ: Նախարարությունը հղում է կատարել Սահմանադրության 43-րդ հոդվածին (տե՛ս ներքեւում՝ 23-րդ պարբերությունը), «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածին (տե՛ս ներքեւում՝ 27-րդ եւ 28-րդ պարբերությունները), «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 2-րդ հոդվածին, 8-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» եւ «դ» կետերին եւ 12-րդ հոդվածին (տե՛ս համապատասխանաբար ներքեւում՝ 32-րդ, 33-րդ եւ 36-րդ պարբերությունները), ինչպես նաեւ Կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմանը (տե՛ս ներքեւում՝ 37-րդ պարբերությունը): Նախարարությունն այնուհետև պնդել է, որ այդ բոլոր ներպետական օրենքների դրույթների հիման վրա, մասնավորապես՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա (տե՛ս ներքեւում՝ 36-րդ պարբերության վերջին հատվածը), պաշտպանության նախարարն իր 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 9 Ն հրամանով

(Հրաման) հաստատել է «Պաշտպանության նախարարության համակարգում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», որի I հավելվածի (դրա 42-րդ կետում՝ տե՛ս ներքեւում՝ 39-րդ պարբերությունը) համաձայն՝ դիմումատու ՀԿ-ի կողմից հայցվող տեղեկությունները ցանկում ընդգրկված են որպես գաղտնագրման ենթակա տեղեկություններ: Ի վերջո, նախարարությունը պնդել է, որ Վարչական դատարանը չէր կարող իրեն պարտավորեցնել դիմումատու ՀԿ-ին տրամադրել պահանջվող տեղեկությունները, քանի որ Վարչական դատավարության օրենսգրքի (տվյալ պահին գործող. տե՛ս ներքեւում՝ 24-րդ պարբերությունը) 124-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով դատարանը հայցվող գործողության իրավաչափությունը որոշում է իր դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

16. 2015 թվականի սեպտեմբերի 30-ին դիմումատու ՀԿ-ն հայց է ներկայացրել Վարչական դատարան (Թիվ 2 վարչական վարույթ)՝ դրանով իսկ պահանջելով անվավեր ճանաչել Հրամանի I հավելվածի 42-րդ եւ 43-րդ կետերը (տե՛ս ներքեւում՝ 39-րդ պարբերությունը): Դիմումատու ՀԿ-ն, *ի թիվս այլնի*, նշել է, որ ավելի քան չորս տարի (իր կողմից հայցը ներկայացնելու պահի դրությամբ) աշխատում է հարաբերականորեն խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողների հետ՝ աջակցելով նրանց իրենց շահերի ներկայացման գործում եւ փորձելով օգնել նրանց պարզելու, թե ինչու եւ ինչպես են մահացել իրենց որդիները հայրենիքի պաշտպանությունն իրականացնելիս: Քննարկվող տվյալների բազան (տե՛ս վերեւում՝ 7-րդ պարբերությունը) ստեղծվել էր զոհված զինծառայողների ծնողների կողմից ստացվող տեղեկությունները համակարգելու նպատակով: Այնուամենայնիվ, Պաշտպանության նախարարությունը հրաժարվել էր դիմումատու ՀԿ-ին տրամադրել պաշտոնական տեղեկություններ զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերի եւ պատահարների վերաբերյալ (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը)՝ այդ մերժումը հիմնավորելու համար հղում կատարելով Հրամանին (տե՛ս ներքեւում՝ 38-րդ եւ 39-րդ պարբերությունները), որն ընդունվել էր այն բանից հետո, երբ դիմումատու ՀԿ-ն ներկայացրել էր վարչական բողոք՝ պահանջելով պարտավորեցնել Պաշտպանության նախարարությանը

տրամադրել քննարկման առարկա հանդիսացող տեղեկությունները (տե՛ս վերևում՝ 14-րդ եւ 15-րդ պարբերությունները): Դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ նախարարության կողմից իր պահանջած տեղեկությունների տրամադրումը մերժելն իրեն զրկել է որպես քաղաքացիական հասարակության մաս հանդիսացող կառույց իր գործառույթներն իրականացնելու հնարավորությունից, այնպիսի վնասակար երեւոյթների արմատական պատճառների դեմ պայքարելու հնարավորությունից, ինչպիսիք են կոռուպցիան, ոչ կանոնադրական հարաբերությունները, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների բացակայությունն ու անպատժելիության զգացողությունը զինված ուժերում (որոնք հանգեցրել էին երիտասարդ զինծառայողների շրջանում սպանությունների, ինքնասպանությունների, ինքնասպանության դրդելու եւ այլ հանցագործությունների արդյունքում մահվան դեպքերի բարձր ցուցանիշների):

Թիվ 1 վարչական վարույթը (տե՛ս վերևում՝ 14-րդ պարբերությունը) կասեցվել է նախքան այս հայցի քննության ավարտը:

17. Թիվ 2 վարչական վարույթում ներկայացրած փաստարկներում Պաշտպանության նախարարությունը լրացուցիչ հղում է արել Հայաստանի նախագահի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակված Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինին (որով սահմանվում էին ազգային անվտանգության առաջնահերթություններն ու սկզբունքները): Հղում կատարելով Ռազմավարական դոկտրինին եւ պետական սահմաններին այդ պահին տիրող ռազմաքաղաքական իրավիճակին (ներառյալ՝ «շփման գծում» տիրող լարվածությունը)՝ Պաշտպանության նախարարությունն ընդգծել է զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերին ու պատահարներին (ինչպես նաեւ դրանց պատճառներին) վերաբերող տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունը:

18. 2016 թվականի մարտի 11-ի որոշմամբ Վարչական դատարանը մերժել է դիմումատու ՀԿ-ի հայցը (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերությունը)՝ մասնավորապես նշելով հետևյալը.

«... հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչ ոլորտի (զինվորական) են վերաբերում [Հրամանի I հավելվածի] 42-րդ եւ 43-րդ կետերում նշված տեղեկությունները, ինչպես նաեւ այդ տեղեկությունների բնույթը՝ դատարանը գտնում է, որ տվյալ ռազմաքաղաքական համատեքստում այդ տեղեկությունների բացահայտումը կարող է օբյեկտիվ իրականության մեջ վտանգել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը: Ուստի այդպիսի տեղեկությունները որպես գաղտնի տեղեկություններ դասակարգելն իրավաչափ է, ինչպես նաեւ իրավաչափ են այդ տեղեկությունները գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկում ներառելու ուղղությամբ [համապատասխան] պետական մարմնի կողմից ձեռնարկված գործողությունները:

...»:

19. Դիմումատու ՀԿ-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

20. 2016 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ Վարչական վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Վարչական դատարանի 2016 թվականի մարտի 11-ի որոշումը (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Վերաքննիչ դատարանն իր հիմնավորման մեջ նշել է, որ առաջին աստիճանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ «[Վերաքննիչ դատարանի] որոշման մեջ արտացոլված հիմնավորման» հիման վրա: Մասնավորապես այն նշել է, որ զինված ուժերում միջադեպերի եւ պատահարների վերաբերյալ տեղեկությունները (որոնք ըստ դիմումատու ՀԿ-ի կողմից վիճարկվող դրույթների ենթակա էին որպես գաղտնի դասակարգման) «անվիճելիորեն ներառված էին զինված ուժերի մարտունակության գնահատման չափանիշներում», եւ որ զինված ուժերի մարտունակությանը վերաբերող փաստաթղթերը, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, սահմանված էին որպես գաղտնագրման ենթակա տեղեկություններ (տե՛ս ներքեւում՝ 35-րդ պարբերությունը):

21. 2016 թվականի սեպտեմբերի 7-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատու ՀԿ-ին բողոքարկել թույլատրելը:

22. 2016 թվականի դեկտեմբերին Վարչական դատարանը վերսկսել է Թիվ 1 վարչական վարույթը (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերության վերջին հատվածը). 2017 թվականի ապրիլի 18-ի վճռով մերժել է դիմումատու ՀԿ-ի հայցը (տե՛ս

վերելում՝ 14-րդ պարբերությունը): Այդպիսով, Վարչական դատարանը նշել է, որ դիմումատու ՀԿ-ի հայցը բավարարելու համար այն նախ պետք է պարզեր, որ պահանջված գործողությունն իրավաչափ էր. բացի այդ, Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (տե՛ս ներքևում՝ 24-րդ պարբերությունը)՝ դատարանը պարտավոր էր կիրառել այն օրենքը, որն ուժի մեջ էր իր որոշումը կայացնելու պահին: Հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին (տե՛ս ներքևում՝ 29-րդ պարբերությունը), «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին (տե՛ս ներքևում՝ 35-րդ պարբերությունը), Հրամանին (տե՛ս ներքևում՝ 38-րդ եւ 39-րդ պարբերությունները) եւ 2016 թվականի մարտի 11-ի որոշմանը (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը)՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ չէր կարող Պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել տրամադրել դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջվող տեղեկությունները, քանի որ այդ տեղեկությունները գաղտնագրման ենթակա տեղեկություններ էին՝ Հրամանի I հավելվածի 42-րդ եւ 43-րդ կետերին (տե՛ս ներքևում՝ 39-րդ պարբերությունը) համապատասխան: Դիմումատու ՀԿ-ն չի բողոքարկել այդ որոշումը:

## **ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

### **I. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

**Ա. 1995 թվականի Սահմանադրություն (2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններից հետո)**

23. Տվյալ ժամանակահատվածում գործող Սահմանադրության համապատասխան դրույթներով նախատեսվում է.

#### **Հոդված 23**

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով:

...»

#### **Հոդված 27**

«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

...»

#### **Հոդված 43**

«Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25-րդ, 27-րդ, 28-30-րդ, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

...»:

### **Բ. Վարչական դատավարության օրենսգիրք**

24. Վարչական դատավարության օրենսգրքի (գործում է 2014 թվականի հունվարի 7-ից) 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաեւ հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում եւ դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

### **Գ. Քրեական դատավարության օրենսգիրք**

25. Նախկին Քրեական դատավարության օրենսգրքի (գործել է մինչեւ 2022

թվականի հուլիսի 1-ը) 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

## **Դ. «Տեղեկատվության ազատության մասին» օրենք**

26. 2003 թվականի սեպտեմբերի 23-ի «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի (որն ուժի մեջ է մտել 2003 թվականի նոյեմբերի 15-ից)՝ տվյալ ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթներով սահմանվում էր հետևյալը:

27. 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իրեն անհրաժեշտ տեղեկություններին եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություններ տնօրինողին եւ ստանալու դրանք:

28. 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

29. 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկություններ տնօրինողը կարող է մերժել հայցվող տեղեկության տրամադրումը, եթե դա, *ի թիվս այլնի,* պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք (8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ). այդ անելը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ հաղորդակցության այլ տեսակների գաղտնիությունը (8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ). կամ պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները (8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

30. 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պահանջվող

տեղեկությունների մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

**Ե. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենք**

31. 1996 թվականի դեկտեմբերի 3-ի «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի (այլեւս չի գործում)՝ տվյալ ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթներով սահմանվում էր հետեւյալը:

32. 2-րդ հոդվածով սահմանվում է, որ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

33. 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում են Կառավարության՝ տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորությունները. այդ մասով Կառավարությունն օժտվում է տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը մշակելու եւ հաստատելու (8-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետ), ինչպես նաեւ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը մշակելու եւ հաստատելու (8-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետ) լիազորությամբ:

34. 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պետական գործադիր, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու եւ դրանց

պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

35. 9-րդ հոդվածում թվարկված են այն տեղեկությունների տեսակները, որոնք կարող են դասվել Պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին:

9-րդ հոդվածի 1-ին մասում, որը վերաբերում է ռազմական բնագավառին, ի թիվս այլնի թվարկված են հետևյալ տեղեկությունները.

- զինված ուժերի ռազմավարական եւ օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման եւ անցկացման, զորքերի ռազմավարական, օպերատիվ եւ զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության եւ զորակոչային պահեստագործի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին (9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ),

- Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների եւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության եւ թվաքանակի մասին (9-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ):

36. 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ պարբերություններով սահմանվում է, ի թիվս այլնի, որ տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասում են պետական այն մարմինները, որոնց պաշտոնատար անձինք օժտված են տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով: Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը: Այդ ցանկերը եւ դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից: Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն:

**Զ. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. մարտի 13-ի թիվ 173 որոշումը Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին**

37. 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ Կառավարությունը հաստատել է պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ եւ 12-րդ հոդվածների համաձայն (տե՛ս վերելում՝ 33-րդ, 34-րդ եւ 36-րդ կետերը): Որոշմանը կցված հաստատված ցանկի I բաժինը վերաբերում է ռազմական բնագավառի տեղեկություններին, որոնք, *ի թիվս այլնի*, ներառում են՝ i) զորքերի զարգացման թվի, մարտական կազմի կամ քանակի, նրանց մարտական պատրաստականության, ինչպես նաեւ ռազմաքաղաքական եւ օպերատիվ իրադրության մասին տեղեկություններ (1-ին բաժնի 3-րդ կետ), եւ ii) զորքերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, զինվածությունը, թիվը բացահայտող տեղեկություններ (1-ին բաժնի 8-րդ կետ): Նախարարությունը նշանակվել է որպես այն պետական մարմիններից մեկը, որը լիազորված էր տնօրինելու քննարկման առարկա տեղեկությունները:

**Է. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2015թ. հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին**

38. 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանով պաշտպանության նախարարը հաստատել է «Պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը» (Հավելված I):

39. I հավելվածում ընդգրկված ցանկի 17-րդ գլուխում, որը վերնագրված է «Տեղեկություններ ռազմական ուստիկանության գործունեության, ինչպես նաեւ

իրավախախտումների եւ պատահարների վերաբերյալ», որպես գաղտնագրման ենթակա տեղեկություններ ներառված են հետեւյալ տեղեկությունները.

- զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաեւ դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկությունների գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական եւ օպերատիվ իրադրության փոփոխությամբ, (42-րդ կետ) եւ

- զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները՝ ըստ տեղեկությունների գաղտնիության աստիճանի (43-րդ կետ):

## II. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Սահմանադրական դատարանի 2012 թվականի մարտի 6-ի որոշումը «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետի, 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխան լինելու վերաբերյալ

40. 2012 թվականի մարտի 6-ի որոշման մեջ Սահմանադրական դատարանն անդրադարձել է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության (մեկ այլ ՀԿ) կողմից ներկայացված դիմումին, որը 2010 թվականին ապարդյուն փորձել էր ստանալ տեղեկություններ 2009 թվականին ծառայության ընթացքում մահացած զինծառայողների թվաքանակի, նրանց անունների եւ հասցեների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը համարել է, որ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետը եւ 12-րդ հոդվածի 6-րդ մասը (տե՛ս վերելում՝ 34-րդ եւ 36-րդ պարբերությունները) համապատասխանում են Սահմանադրությանը: Ինչ վերաբերում է նույն օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասին, ապա Սահմանադրական դատարանը համարել է, որ տվյալ մասի այն հատվածը, որը շարադրված է հետեւյալ կերպ՝ «[գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը] գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն» (տե՛ս վերելում՝ 36-րդ պարբերության վերջին հատվածը) այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, հակասում է Սահմանադրության 27-րդ եւ 43-րդ հոդվածների (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը) պահանջներին:

Մասնավորապես Սահմանադրական դատարանը վճռել է, որ որպես պետական գաղտնիք գաղտնագրման ենթական տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնք կազմվել են ներպետական օրենքների պահանջներին համապատասխան, *ըստ էության* չեն հանգեցրել տեղեկություններ ստանալու իրավունքի (ապօրինի) սահմանափակման: Այդ իրավունքի

սահմանափակումները սահմանված էին օրենքով, որը համապատասխան գործադիր մարմիններին լիազորում էր կիրառել դրանք. այսինքն՝ սահմանափակումները ոչ թե սահմանվել էին այդ մարմինների կողմից, այլ բխում էին օրենքից: Միեւնույն ժամանակ Սահմանադրական դատարանը նշել է, որ ընդլայնված գերատեսչական ցանկերի գաղտնագրումն ինքնին հակասում էր Սահմանադրությանը, քանի որ սահմանափակումները վերաբերում էին գաղտնագրման ենթակա տեղեկություններին, այլ ոչ բուն ցանկերին, որոնցում տեղեկությունների յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված վերնագրի ներքո զուտ ներկայացված էին ոլորտները, որոնց վերաբերյալ որոշ տեղեկություններ պետք է գաղտնագրվեին (այդ ոլորտները սահմանված էին «Պետական եւ պաշտոնական գաղտնիքի մասին» օրենքով, Կառավարության համապատասխան որոշումներով եւ մատչելի էին հանրությանը):

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

41. Դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ Պաշտպանության նախարարության կողմից իր կողմից պահանջված տեղեկությունների մատչելիությունն ապահովելուց հրաժարվելը խախտել է իր՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված իրավունքները, որը շարադրված է հետևյալ կերպ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւակերպություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են

Ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկությունների բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

## Ա. Ընդունելիությունը

### 1. Ratione materiae համատեղելիությունը

#### ա) Կողմերի փաստարկները

##### i) Կառավարությունը

42. Կառավարությունը պնդել է, որ բողոքը *ratione materiae* անհամատեղելի է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ: Այն փաստել է, որ դիմումատու ՀԿ-ն որեւէ կերպ չի պարզաբանել, թե զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ իր կողմից պահանջված տեղեկությունները, այդ թվում՝ զոհվածների անունները, միջադեպերի տեղի ունենալու ամսաթվերը եւ վայրերը, համապատասխան զորամասերի համարները (եւ այդ զորամասերի հրամանատարների անուններն ու զինվորական կոչումները), մահվան դեպքերի պատճառները, ինչպես նաեւ յուրաքանչյուր միջադեպի հակիրճ նկարագրությունը, ինչպես կարող էին իրեն օգնել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն աջակցելու իր նպատակն իրագործելու հարցում: ՀԿ-ն նաեւ հստակ չէր նշել քննարկվող տեղեկությունները հանրությանը մատչելի դարձնելու նպատակը. դրանք պարունակում էին զոհվածների մասին անձնական տվյալներ եւ ռազմական բնույթի զգայուն տեղեկություններ: Դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջվող մանրամասն տվյալներն այնպիսի տեղեկություններ չէին, որոնք հանրությունն իրավունք ուներ ստանալու: Բացի այդ, դիմումատու ՀԿ-ի տվյալների առցանց բազան (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը) արդեն իսկ պարունակում էր դեռեւս վաղ 2000-ականներին զինված ուժերում տեղի

ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, որից պարզ էր դառնում, որ ՀԿ-ն չուներ Պաշտպանության նախարարությունից պահանջվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների կարիքը, որպեսզի կարողանար իրականացնել իր նպատակներն ու նպաստել ակնհայտորեն հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդրի քննարկմանը:

*ii) Դիմումատու ՀԿ-ն*

43. Դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի նկատմամբ հանրային մեծ պահանջարկ էւ հետաքրքրություն կար, ինչը հանրային լուրջ մտահոգության պատճառ էր դարձել: ՀԿ-ի նպատակներից էին, *ի թիվս այլնի՝* i) զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ii) զինված ուժերում ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած մահվան դեպքերի, ինչպես նաեւ կատարված իրավախախտումների գրանցումը եւ վերլուծությունը, եւ iii) իրավասու մարմիններին առաջարկներ ներկայացնելը՝ այդպիսի դեպքերը կանխելու նպատակով: 2014 թվականի նոյեմբերի 7-ի հարցման (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը) նպատակը 1994 թվականի հրադադարից հետո մինչեւ 2014 թվականն ընկած ժամանակահատվածում զինժառանգների մահվան պատճառ դարձած դեպքերի վերաբերյալ ամբողջական պաշտոնական տեղեկություններ ապահովելն էր: Դիմումատու ՀԿ-ի տրամադրության տակ եղած տեղեկությունները ձեռք էին բերվել լրատվամիջոցներից, տուժածների հարազատներից, այլ ՀԿ-ներից, իսկ 2010 եւ 2011 թվականների մասով՝ Պաշտպանության նախարարությունից (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, միայն Պաշտպանության նախարարությունը կարող էր դիմումատու ՀԿ-ին տրամադրել լիարժեք տեղեկություններ, որոնք նրան հնարավորություն կտային լիարժեք պատկերացում կազմելու քննարկվող միջադեպերի պատճառների մասին եւ վերլուծելու դրանք, որպեսզի ՀԿ-ն իրականացներ իր նպատակները:

**բ) Դատարանի գնահատականը**

44. Դատարանը հիշեցնում է, որ 10-րդ հոդվածը որեւէ անձի չի վերապահում պետական մարմնի տնօրինության տակ գտնվող տեղեկությունների մատչելիության իրավունք կամ Կառավարությանը չի պարտավորեցնում այդ տեղեկությունները տրամադրել տվյալ անձին: Թեւ այդպիսի իրավունք կամ պարտավորություն կարող է ծագել, երբ տվյալ տեղեկությունների մատչելիությունը թույլ է տալիս, որ տվյալ անձն օգտվի ազատորեն արտահայտվելու իր իրավունքից (մասնավորապես՝ «տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունից»), եւ երբ այդ տեղեկությունների տրամադրումը մերժելը կարող է համարվել միջամտություն այդ իրավունքին (տե՛ս *Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Magyar Helsinki Bizottság v. Hungary* [GC]] գործը, թիվ 18030/11, § 156, 2016 թվականի նոյեմբերի 8):

45. Գնահատելու համար՝ արդյոք տեղեկությունների մատչելիությունը թույլ տալիս է օգտվել ազատորեն արտահայտվելու իրավունքից, թե ոչ, կիրառվում են հետևյալ չափորոշիչները՝ ա) տեղեկությունները հայցելու նպատակը, բ) պահանջվող տեղեկությունների բնույթը, գ) տեղեկություններ պահանջողի դերն այդ տեղեկություններն ստանալու եւ դրանք հանրային դարձնելու գործում, եւ դ) արդյոք տվյալ տեղեկությունները պատրաստ են եւ հասանելի (նույն տեղում, §§ 157-70): Այդ չափորոշիչները, որպես կանոն, համակցված են (տե՛ս վերջին իշխանության մարմինների հետ կապված՝ *Լեհաստանում քաղաքացիների շահերի պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունն ընդդեմ Լեհաստանի* [*Sieć Obywatelska Watchdog Polska v. Poland*] գործը, թիվ 10103/20, § 49 *վերջին հատվածը*, 2024 թվականի մարտի 21 եւ *Գիրգինովան ընդդեմ Բուլղարիայի* [*Girginova v. Bulgaria*] գործը, թիվ 4326/18, § 59, 2025 թվականի մարտի 4՝ հետագա հղումներով):

*ի) Տեղեկությունները հայցելու նպատակը*

46. Ինչպես երևում է դիմումատու ՀԿ-ի հարցումից եւ Վարչական դատարան ներկայացրած փաստարկներից (տե՛ս վերելում՝ 13-րդ, 14-րդ եւ 16-րդ պարբերությունները), տեղեկություններ հայցելու իր նպատակը եղել է զինված ուժերում արձանագրված մահվան դեպքերի վերաբերյալ համապարփակ պաշտոնական վիճակագրություն ստանալը, որը դիմումատու ՀԿ-ին թույլ կտար լիարժեք պատկերացում կազմել քննարկվող միջադեպերի պատճառների մասին եւ վերլուծել դրանք՝ իր նպատակներն իրականացնելու համար (տե՛ս վերելում՝ 43-րդ պարբերությունը): Թեեւ Կառավարությունը կարծում էր, որ դիմումատու ՀԿ-ն այդ տեղեկությունների «կարիքը չուներ» (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը), սակայն գործով ապացույցները վկայում են այն մասին, որ դիմումատու ՀԿ-ն իր տրամադրության տակ ունեցել է զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ միայն մասնակի տեղեկություններ, եւ որ Պաշտպանության նախարարության կողմից այդ տեղեկությունները ստուգելն օգտակար կլիներ (տե՛ս վերելում՝ 13-րդ եւ 43-րդ պարբերությունները): Հետեւաբար կարելի է ողջամտորեն եզրակացնել, որ խնդրո առարկա տեղեկությունները դիմումատու ՀԿ-ին չտրամադրելը խոչընդոտել կամ խաթարել է վերջինիս՝ տվյալների հանրային բազային նպաստելու կարողությունը՝ հիմնվելով ճշգրիտ եւ հուսալի տվյալների վրա (տե՛ս՝ *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) վերելում հիշատակված *Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի* գործը, § 175 եւ վերելում հիշատակված *Լեհաստանում քաղաքացիների շահերի պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունն ընդդեմ Լեհաստանի* գործը, § 50): Հետեւաբար դատարանը բավարարված է համարում այն պայմանը, որ տվյալ տեղեկություններն «անհրաժեշտ» էին դիմումատու ՀԿ-ի ազատորեն արտահայտվելու իրավունքի իրացման համար (տե՛ս *mutatis mutandis* *Զոլդին ընդդեմ Հունգարիայի [Zöldi v. Hungary]* գործը, թիվ 49049/18, § 35, 2024 թվականի ապրիլի 4):

ii) Պահանջվող տեղեկությունների բնույթը

47. Անդրադառնալով պահանջվող տեղեկությունների բնույթին՝ Դատարանը հիշեցնում է, որ տեղեկությունները, որոնց մատչելիությունն է պահանջվում, պետք է բավարարեն հանրային շահերին համապատասխանության ստուգման եւ գնահատման պահանջները, որպեսզի առաջանա այդ տեղեկությունների բացահայտման անհրաժեշտություն՝ Կոնվենցիային համապատասխան (տե՛ս վերելում հիշատակված *Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի* գործը, § 161): Դատարանն ընդգծել է, որ հանրային շահին վերաբերող են համարվում այն հարցերը, որոնք հանրության վրա ազդում են այնքան, որ հանրությունը կարող է օրինականորեն հետաքրքրվել դրանցով, որոնք գրավում են հանրության ուշադրությունը, կամ որոնք էականորեն վերաբերում են հանրությանը, հատկապես այն առումով, որ դրանք ազդում են քաղաքացիների բարեկեցության կամ համայնքի կյանքի վրա: Սա գործում է նաեւ այն հարցերի դեպքում, որոնք կարող են խոշոր վեճերի տեղիք տալ, որոնք վերաբերում են սոցիալական կարեւոր խնդրի, կամ որոնք ներառում են այնպիսի խնդիր, որի մասին տեղեկացված լինելը բխում է հանրության շահերից (տե՛ս *Կուդերկը եւ Աշետ Ֆիլիպակի Գործընկերներն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Couderc and Hachette Filipacchi Associés v. France* [GC]] գործը, թիվ 40454/07, § 103, ՄԻԵԴ 2015 (քաղվածքներ)՝ հետագա հղումներով):

48. Դատարանն արձանագրում է, որ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի հարցն, անկասկած, զգալիորեն վերաբերում է հանրային շահին. իրականություն, որն ընդունել է նաեւ Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերության *վերջին հատվածը*): Դատարանը, որը բազմիցս քննել է այդ հարցին վերաբերող գործեր (տե՛ս, ի թիվս այլ օրինակների, *Միրզոյանն ընդդեմ Հայաստանի* [*Mirzoyan v. Armenia*] գործը, թիվ 57129/10, 2019 թվականի մայիսի 23, *Նանա Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* [*Nana Muradyan v. Armenia*] գործը, թիվ 69517/11, 2022 թվականի ապրիլի 5, *Աշոտ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Ashot Malkhasyan v. Armenia*] գործը, թիվ 35814/14, 2022 թվականի հոկտեմբերի 11, *Հովհաննիսյանն ու Նազարյանն ընդդեմ Հայաստանի* [*Hovhannisyan and Nazaryan v. Armenia*] գործը, թիվ 2169/12, 29887/14,

2022 թվականի նոյեմբերի 8, *Դիմաքսյանն ընդդեմ Հայաստանի [Dimaksyan v. Armenia]* գործը, թիվ 29906/14, 2023 թվականի հոկտեմբերի 17, *Վարյանն ընդդեմ Հայաստանի [Varyan v. Armenia]* գործը, թիվ 48998/14, 2024 թվականի հունիսի 4), որեւէ պատճառ չունի կասկածելու, որ դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջված տեղեկությունների առնվազն զգալի մասը վերաբերում էր հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի:

*iii) Տեղեկություններ պահանջողի դերը*

49. Որեւէ փուլում կասկածի տակ չի առնվել, որ դիմումատու ՀԿ-ն հանրային վերահսկողություն իրականացնող մարմնի դեր էր իրականացնում, երբ պահանջում էր քննարկվող տեղեկությունների մատչելիություն: Այս դերն անժխտելիորեն համատեղելի է պետության տնօրինության տակ գտնվող տեղեկությունների մատչելիություն պահանջելու իրավունքի հետ (տե՛ս վերոնշյալ *Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի* գործը, §§ 166-167, ինչպես նաև, *mutatis mutandis*, վերոնշյալ *Զոլդին ընդդեմ Հունգարիայի* գործը, § 37):

*iv) Տեղեկությունների պատրաստ լինելը եւ հասանելիությունը*

50. Եվ վերջապես, Դատարանը նշում է, որ դիմումատու ՀԿ-ն Պաշտպանության նախարարությունից հայցել է իրեն տրամադրել 1994-2014 թվականների ընթացքում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տվյալներ (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը): Թեև ներկայացված հարցման մեջ նշված ժամանակահատվածը բավականին մեծ էր՝ 20 տարի, այնուամենայնիվ, Դատարանն արձանագրում է, որ իշխանության մարմինները երբեւէ չեն պնդել, որ հայցվող տեղեկությունները հավաքագրելն իրենց համար չափազանց բարդ կլիներ, եւ հետեւաբար Դատարանը պետք է ենթադրի, որ քննարկվող տեղեկությունները, ըստ էության, պատրաստ էին եւ հասանելի (տե՛ս, *mutatis mutandis*, *Յուրի Չումակն ընդդեմ Ուկրաինայի [Yuriy*

*Chumak v. Ukraine*] գործը, թիվ 23897/10, § 32, 2021 թվականի մարտի 18, համեմատեք եւ հակադրեք նաեւ *Վեբերն ընդդեմ Գերմանիայի (որոշում)* [*Weber v. Germany (dec.)*] գործը, թիվ 70287/11, 2015 թվականին հունվարի 6): Կողմերը եւս երբեւէ չեն վիճարկել հայցվող տեղեկությունների առկա եւ հասանելի լինելու հարցը:

v) *Եզրակացություն*

51. Արդյունքում Դատարանը բավարարված է համարում այն պայմանը, որ դիմումատու ՀԿ-ն ցանկացել է իրացնել հանրային հետաքրքրություններկայացնող հարցի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկություններ տարածելու իր իրավունքը եւ այդ նպատակով, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն, պահանջել է տեղեկությունների մատչելիությունը (տե՛ս, *mutatis mutandis, Շեքսն ընդդեմ Խորվաթիայի* [*Šeks v. Croatia*] գործը, թիվ 39325/20, § 43, 2022 թվականի փետրվարի 3 եւ վերոնշյալ *Լեհաստանում քաղաքացիների շահերի պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունն ընդդեմ Լեհաստանի* գործը, § 65): Հետեւաբար 10-րդ հոդվածը կիրառելի է, եւ Կառավարության առարկությունը դիմումատու ՀԿ-ի բողոքի *ratione materiae* անհամատեղելիության վերաբերյալ ենթակա է կարճման:

## 2. Անընդունելիության այլ հիմքեր

52. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտ անհիմն է, ո՛չ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

### Բ. Ըստ էության քննությունը

#### 1. Կողմերի փաստարկները

##### ա) Դիմումատու ՀԿ-ն

53. Դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ տեղեկություններ տարածելու իր իրավունքը սահմանափակվել է անկանխատեսելի եղանակով՝ Հրամանի հիման վրա (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 38-39-րդ պարբերությունները), որով խախտվել են ներպետական օրենքների, այդ թվում՝ Սահմանադրության եւ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի (տե՛ս վերելում՝ 23-րդ եւ 31-36-րդ պարբերությունները) պահանջները: Հրամանը, որը դիմումատու ՀԿ-ի կողմից հարցում ներկայացնելու պահին գոյություն չի ունեցել, կամայականորեն ընդլայնել է այն տեղեկությունների շրջանակը, որոնք, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, կարող էին դասվել պետական գաղտնիքի շարքին (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը):

54. Հայցվող տեղեկությունները (որոնք վերաբերում էին ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած միջադեպերին) հնարավորություն կտային դիմումատու ՀԿ-ին բացահայտելու այդ միջադեպերի պատճառները եւ մշակելու առաջարկություններ՝ ուղղված զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավմանը. դրանք (հակառակ Վարչական վերաքննիչ դատարանի հիմնավորման. տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը) չէին վերաբերում զինված ուժերի զինծառայողների թվաքանակին, զինված ուժերի կարողություններին եւ տեղակայման վայրերին եւ հետեւաբար չէին կարող համարվել զինված ուժերի

մարտական պատրաստականությունը բացահայտող տեղեկություններ:

55. Դիմումատու ՀԿ-ն փաստարկ է ներկայացրել, որ Պաշտպանության նախարարությունն ամբողջությամբ մերժել էր իր հարցումը՝ պնդելով, որ պահանջվող տեղեկությունները համարվում էին պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, թեև 2020 թվականին Գլխավոր դատախազությունը դիմումատու ՀԿ-ի հարցման հիման վրա տրամադրել էր զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները: Դիմումատու ՀԿ-ն ներկայացրել է ի պատասխան տեղեկությունների իր հարցման Գլխավոր դատախազության կողմից 2020 թվականի հունիսին ստացված պատասխանը, որում ներառված էր 2020 թվականի հունվարից մայիս ամիսներին զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի եւ միջադեպերի ցանկը: Ցանկում ներառված էին զոհված զինծառայողների անունները, մահվան պատճառները, միջադեպերի ու պատահարների տեղի ունենալու ամսաթվերը եւ վայրերը (անկախ այն հանգամանքից՝ դրանք տեղի էին ունեցել Հայաստանի Հանրապետության, թե «Արցախի Հանրապետության» տարածքում):

56. Կարճ ասած՝ դիմումատու ՀԿ-ն պնդել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ տարածելու իր իրավունքի սահմանափակումը սահմանված չի եղել օրենքով, ազգային անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակ չի հետապնդել, ինչպես նաեւ չի եղել անհրաժեշտ:

#### **բ) Կառավարությունը**

57. Կառավարությունը փաստարկ է ներկայացրել, որ օրենքը, որով կարգավորվում է տեղեկությունների գաղտնագրման ընթացակարգը, ուժի մեջ է եղել այն ժամանակ, երբ դիմումատու ՀԿ-ն Պաշտպանության նախարարությանը ներկայացրել էր տեղեկություններ հայցելու վերաբերյալ իր բոլոր երեք հարցումները (տե՛ս վերելում՝ 8-րդ, 10-րդ եւ 13-րդ պարբերությունները): Հրամանի ընդունումը (որը եղել է հարաբերականորեն ավելի ուշ փուլում) բխել է արդեն իսկ

գործող օրենքից, մասնավորապես՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքից եւ Կառավարության թիվ 173 որոշումից (տե՛ս վերելում՝ 31-36-րդ եւ 37-րդ պարբերությունները), ինչպես նաեւ Կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 665 որոշումից («Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակման կարգը հաստատելու մասին»):

58. Կառավարությունը պնդել է, որ Պաշտպանության նախարարությունը եւ վարչական դատարանները ներկայացրել էին դիմումատու ՀԿ-ի կողմից հայցվող տեղեկությունները բացահայտման ոչ ենթակա տեղեկություններ համարելու հստակ հիմնավորում, քանի որ դրանք պետական գաղտնիք էին պարունակում: Բանակում գրանցված միջադեպերն ու պատահարներն անմիջականորեն առնչվում էին զինված ուժերի մարտական պատրաստականությանը (տեղեկություն, որը պաշտպանված է «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով եւ Կառավարության թիվ 173 որոշմամբ. տե՛ս 35-րդ եւ 37-րդ պարբերությունները), մինչդեռ Հրամանի I հավելվածի 17-րդ գլխի 42-րդ կետում (տե՛ս վերելում՝ 39-րդ պարբերությունը) հստակ նշված էր, որ այդ տեղեկությունները ենթակա էին գաղտնագրման՝ հաշվի առնելով տիրող ռազմաքաղաքական իրավիճակը:

59. Կառավարությունը պնդել է, որ դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջվող տեղեկությունները վերաբերում էին ոչ միայն զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերին ու պատահարներին, այլ նաեւ չափազանց զգայուն տեղեկությունների, ինչպիսիք էին համապատասխան զորամասերի համարները (եւ այդ զորամասերի հրամանատարների անունները). այդուհանդերձ, դիմումատու ՀԿ-ն չէր նշել այն հստակ պատճառը, թե ինչու էր ուզում իմանալ այդ մանրամասները: Կառավարության տեսանկյունից՝ դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջվող բոլոր տեղեկություններն առնչվում էին ազգային անվտանգության խնդիրներին:

60. Ի վերջո, Կառավարությունը փաստել է, որ դիմումատու ՀԿ-ն

հնարավորություն ունեւ վարչական դատարաններում մրցակցային վարույթի միջոցով վիճարկելու Հրամանի համապատասխան դրույթների վավերականությունը (տե՛ս վերելում՝ 39-րդ պարբերությունը): Պաշտպանության նախարարության եւ ներպետական դատարանների կողմից դիմումատու ՀԿ-ին քննարկվող տեղեկությունների նկատմամբ մատչելիության հարցում մերժելու պատճառաբանությունները եղել էին ոչ միայն համապատասխանող, այլ, հաշվի առնելով հանգամանքները, նաեւ բավարար: Վարչական դատարանը պարտավոր էր առաջնորդվել Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջով (տե՛ս վերելում՝ 22-րդ եւ 24-րդ պարբերությունները), ըստ որի՝ դատարանը պարտավոր էր կիրառել այն օրենքը, որն ուժի մեջ էր իր որոշումը կայացնելու պահին, մասնավորապես՝ Հրամանի (որը թույլ չէր տալիս բացահայտել քննարկվող տեղեկությունները), «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի եւ Կառավարության թիվ 173 որոշման համապատասխան դրույթները:

## 2. Դատարանի գնահատականը

### ա) Արդյոք եղել է միջամտություն

61. Հաշվի առնելով, որ Դատարանը նախկինում գտել է, որ դիմումատու ՀԿ-ի՝ տեղեկություններ հայցելու վերաբերյալ հարցումը *ratione materiae* համատեղելի էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ (տե՛ս վերելում՝ 51-րդ պարբերությունը)՝ Դատարանը եզրակացնում է, որ դիմումատու ՀԿ-ին հայցվող տեղեկությունների նկատմամբ մատչելիության հարցում մերժելով՝ ներպետական իշխանության մարմինները միջամտել են նրա՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքներին (տե՛ս վերելում հիշատակված *Գիրգինովան ընդդեմ Բուլղարիայի* գործը, § 86՝ հետագա հղումներով):

### բ) Արդյոք միջամտությունը եղել է արդարացված

62. Որպեսզի այդպիսի միջամտությունը համատեղելի լինի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, այն պետք է, ինչպես նշված է նույն հոդվածի երկրորդ մասում, «նախատեսված լինի օրենքով», հետապնդի այդ մասում թվարկված իրավաչափ նպատակներից մեկը կամ մի քանիսը, եւ «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում»՝ այդ նպատակին կամ նպատակներին հասնելու համար:

*i) «Նախատեսված է օրենքով»*

63. Ազատորեն արտահայտվելու իրավունքի նկատմամբ միջամտության «օրենքով նախատեսված լինելը» գնահատելու համար համապատասխան սկզբունքներն ամփոփված են *Սատակուննան Մարկկինապորսսի Օյը եւ Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի* [*Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland*] գործում ([ՄՊ] [GC], թիվ 931/13, §§ 142-45, 2017 թվականի հունիսի 27): Բացի այդ, Դատարանը եւս մեկ անգամ ընդգծում է, որ ներպետական օրենքին համապատասխանությունը ստուգելու իր լիազորությունները սահմանափակ են, եւ առաջին հերթին ազգային իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների պարտականությունն է ներպետական օրենքը մեկնաբանելը եւ կիրառելը, քանի որ ազգային իշխանության մարմիններն, ըստ էության, հատկապես իրավասու են լուծելու այս կապակցությամբ առաջացող հարցերը: Եթե օրենքի մեկնաբանությունը կամ կիրառումը կամայական կամ ակնհայտորեն անտրամաբանական չէ, ապա Դատարանի դերը սահմանափակվում է միայն նրանով, որ այն պետք է պարզի՝ արդյոք այդ մեկնաբանության հետեւանքները համատեղելի են Կոնվենցիայի պահանջների հետ (տե՛ս *Ռոդամիլյան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [*Radomilja and Others v. Croatia*] [GC]] գործը, թիվ 37685/10 եւ թիվ 22768/12, § 149, 2018 թվականի մարտի 20 եւ «*Ժողովրդավարության եւ իրավունքի գերակայության կենտրոն*» ՀԿ-ն ընդդեմ *Ուկրաինայի* [*Centre for Democracy and the Rule of Law v. Ukraine*] գործը, թիվ 10090/16, § 108, 2020 թվականի մարտի 26):

64. Դատարանը նշում է, որ սույն գործում՝ մերժելով Պաշտպանության

նախարարությանը պարտավորեցնել, որ այն դիմումատու ՀԿ-ին տրամադրի հայցվող տեղեկությունները (տե՛ս վերելում՝ 13-րդ եւ 14-րդ պարբերությունները), Վարչական դատարանը վկայակոչել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաեւ Հրամանի I հավելվածի 42-րդ եւ 43-րդ կետերը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է հենց Հրամանին, ապա Դատարանը նշում է, որ այն ընդհանուր իրավական բնույթի նորմատիվ ակտ էր, որով պաշտպանության նախարարը հաստատել էր ռազմական ոլորտին վերաբերող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկը (տե՛ս վերելում՝ 38-րդ պարբերությունը), եւ հետեւաբար այն համապատասխան իրավական գործընթացի մաս էր կազմում (տե՛ս «*Société Colas Est*» ընկերությունը եւ այլք ընդդեմ *Ֆրանսիայի [Société Colas Est and Others v. France]* գործը, թիվ 37971/97, § 43, ՄԻԵԴ 2002-III, եւ [*Robathin v. Austria*] գործը, թիվ 30457/06, § 40, 2012 թվականի հուլիսի 3):

65. Ուստի վիճարկվող միջամտությունն ուներ ներպետական օրենքի վրա հիմնված *իրավական հիմք*:

66. Ինչ վերաբերում է քննարկվող օրենքի որակին, ապա Դատարանը նշում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի կամ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի մատչելիությունն ու կանխատեսելիությունը դիմումատու ՀԿ-ի կողմից որեւէ պահի կասկածի տակ չեն առնվել (տե՛ս վերելում՝ 53-55-րդ պարբերությունները): Իսկ այն մասով, որ դիմումատու ՀԿ-ն փաստարկ էր ներկայացրել՝ կապված հենց Հրամանի ընդունման հետ եւ դիմումատու ՀԿ-ի կարծիքով՝ ներպետական դատարանների կողմից այդ Հրամանի «անկանխատեսելի» կիրառության հետ, Դատարանը համարում է, որ այդ խնդիրն ավելի ճիշտ է դիտարկել վիճարկվող միջամտության անհրաժեշտության ու համաչափության համատեքստում (տե՛ս ներքելում՝ 69-83-րդ պարբերությունները):

67. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ միջամտությունը

«նախատեսված է եղել օրենքով»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

*ii) Իրավաչափ նպատակը*

68. Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք միջամտությունն իրավաչափ նպատակ է հետապնդել՝ Դատարանն առաջ է քաշել Կառավարության այն պնդումը, որ միջամտությունն ազգային անվտանգությունը պաշտպանելու իրավաչափ նպատակ է հետապնդել (տե՛ս վերելում՝ 59-րդ պարբերությունը), եւ հակառակի վերաբերյալ որոշում կայացնելու որեւէ պատճառ չի տեսնում: Հետեւաբար Դատարանն ընդունում է, որ միջամտությունը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, բխել է «ազգային անվտանգության շահերից»:

*iii) Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում*

69. Ընդհանուր սկզբունքները, որոնք վերաբերում են այն հարցին, թե արդյոք ազատորեն արտահայտվելու իրավունքին արված միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», ամփոփված են *Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի* գործում (վերելում հիշատակված, § 187):

70. Ի տարբերություն Դատարանի կողմից քննված նախորդ գործերի մեծամասնության, որտեղ քննարկվում էր դիմումատուի կամ երրորդ անձանց վերաբերյալ անձնական տվյալների հասանելիության հարցը (տե՛ս, օրինակ, վերոնշյալ «*Ժողովրդավարության եւ իրավունքի գերակայության կենտրոն*» ՀԿ-ն ընդդեմ *Ուկրաինայի* գործը, § 113 եւ վերոնշյալ *Զոլդին ընդդեմ Հունգարիայի* գործը, § 48)՝ սույն գործը վերաբերում է այնպիսի տեղեկությունների, որոնք, Կառավարության պնդմամբ (տե՛ս վերելում՝ 58-րդ պարբերության *վերջին հատվածը* եւ 59-րդ պարբերությունը), համարվում են պետական գաղտնիք՝ ազգային անվտանգության նկատառումներով (համեմատության համար տե՛ս

վերոհիշյալ *Շեքսն ընդդեմ Խորվաթիայի* գործը, § 63):

71. Քանի որ «ազգային անվտանգություն» հասկացությունը փոփոխական է և համատեքստային հասկացություն է, պետություններին պետք է տրամադրվի հայեցողության լայն շրջանակ՝ գնահատելու համար, թե տվյալ պահին իրենց երկրներում ինչն է վտանգ ներկայացնում ազգային անվտանգության համար (նույն տեղում): Միեւնույն ժամանակ, «ազգային անվտանգություն» է «պետական անվտանգություն» հասկացությունները պետք է կիրառվեն որոշակի վերապահումով, մեկնաբանվեն նեղ իմաստով և կիրառվեն միայն այն դեպքում, երբ իսկապես ապացուցված է, որ անհրաժեշտ է կանխել խնդրո առարկա տեղեկությունների բացահայտումը՝ ազգային անվտանգությունն ու պետական անվտանգությունը պաշտպանելու նպատակներով (նույն տեղում. տե՛ս նաև *Ստոլլն ընդդեմ Շվեյցարիայի* [ՄՊ] [*Stoll v. Switzerland* [GC]] գործը, թիվ 69698/01, § 54, ՄԻԵԴ 2007-V):

72. Դատարանն ընդունել է, որ չունի բավարար ինստիտուցիոնալ կարողություններ՝ վիճարկելու ազգային անվտանգության նկատառումների գոյության վերաբերյալ ազգային իշխանության մարմինների գնահատականը: Այնուամենայնիվ, նույնիսկ երբ խաղաքարտին դրված է ազգային անվտանգության հարցը, ժողովրդավարական հասարակությունում «իրավաչափություն» և «օրենքի գերակայություն» հասկացությունները պահանջում են, որ մարդու հիմնարար իրավունքների վրա անդրադարձող միջոցառումները ենթակա լինեն մրցակցային վարույթի միջոցով քննության անկախ մարմնի կողմից, որն իրավասու է վերանայելու տվյալ որոշումը կայացնելու պատճառները: Եթե հնարավորություն չլիներ վիճարկելու գործադիր մարմնի այն պնդումը, որ խաղաքարտին դրված էր ազգային անվտանգության հարցը, ապա պետական մարմինները կկարողանային կամայականորեն միջամտել Կոնվենցիայով պաշտպանված իրավունքներին (տե՛ս *Ջաուդն ընդդեմ Գերմանիայի* [*Saure v. Germany*] գործը, թիվ 8819/16, § 53, 2022 թվականի նոյեմբերի 8):

73. Դատարանը նաև ընդգծել է, որ վարույթի արդարացիությունը և

դիմումատուին տրամադրված ընթացակարգային երաշխիքներն այն գործոններն են, որոնք պետք է հաշվի առնվեն՝ 10-րդ հոդվածով երաշխավորված ազատորեն արտահայտվելու իրավունքի նկատմամբ միջամտության համաչափությունը գնահատելիս: Արդյունավետ դատական վերահսկողության բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ 10-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար (տե՛ս *Բակյան ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Baka v. Hungary* [GC]] գործը, թիվ 20261/12, § 161, 2016 թվականի հունիսի 23): Սույն գործի նման դեպքերում, որոնք վերաբերում են ազգային անվտանգության վերաբերյալ մտահոգություններին, որոնք հանգեցնում են մարդու իրավունքները սահմանափակող որոշումների կայացման, Դատարանը, ինչպես տեսնում ենք, մանրակրկիտ քննության է ենթարկում ազգային մակարդակում իրականացված որոշում կայացնելու գործընթացը՝ համոզվելու համար, որ այն իրականացվել է տվյալ անձի շահերի պաշտպանության համար համապատասխան երաշխիքներին համապատասխան (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ջաուդն ընդդեմ Գերմանիայի* գործը, § 54):

74. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նշում է, որ դիմումատու ՀԿ-ն ընդհանուր առմամբ Պաշտպանության նախարարություն ներկայացրել է զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկություններ (զոհվածների անունները, միջադեպերի տեղի ունենալու ամսաթվերը եւ վայրերը, համապատասխան զորամասերի համարները (եւ այդ զորամասերի հրամանատարների անուններն ու զինվորական կոչումները), մահվան դեպքերի պատճառներն ու միջադեպերի հակիճ նկարագրությունը) ստանալու երեք հարցում: Առաջին հարցման մասով Պաշտպանության նախարարությունը մասնակիորեն բավարարել է դիմումատու ՀԿ-ի պահանջը՝ տրամադրելով 2010 եւ 2011 թվականներին մահացած զինծառայողների անունները, ծննդյան ամսաթվերը եւ մահվան պատճառները (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Երկրորդ հարցման մասով Պաշտպանության նախարարությունը հրաժարվել է որեւէ տեղեկություն տրամադրելուց (տե՛ս վերելում՝ 11-րդ պարբերությունը), մինչդեռ դիմումատու ՀԿ-ի երրորդ հարցմանն այն ընդհանրապես չի արձագանքել (տե՛ս

վերելում՝ 14-րդ պարբերությունը), որը եւ հանդիսանում է սույն գործի քննության առարկան:

75. Դատարանն այնուհետեւ նշում է, որ բողոքարկման կարգով Վարչական դատարանն ամբողջությամբ կարճել է դիմումատու ՀԿ-ի վարչական հայցը՝ սահմանափակվելով միայն հայցվող տեղեկությունների գաղտնի բնույթին կատարված հակիրճ հղումով (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանը չի պարզաբանել այն պատճառները, որոնց հիման վրա դիմումատու ՀԿ-ին չի թույլատրվել հայցված տեղեկությունների առնվազն մի մասի մատչելիությունը եւ (կամ) պատշաճ կերպով չի գնահատել դիմումատու ՀԿ-ի կողմից ներկայացված փաստարկները, որոնցով այն հիմնավորում էր քննարկվող տեղեկություններն ստանալու անհրաժեշտությունը, այդ թվում՝ ՀԿ-ի այն փաստարկը, որ Պաշտպանության նախարարությունն արդեն իսկ իրեն տրամադրել էր 2010 եւ 2011 թվականներին զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ (որոշակի) տեղեկություններ (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերության *վերջին հատվածը*):

76. Նախկինում Դատարանն արդեն իսկ քննադատել է ազգային իշխանության մարմիններին՝ գաղտնի փաստաթղթերի մատչելիությունը թույլ չտալու դեպքում համաչափության խորքային վերլուծություն չիրականացնելու համար (տե՛ս վերոնշյալ *Յուրի Չումակն ընդդեմ Ուկրաինայի* գործը, § 47): Այն նշում է, որ տվյալ գործով Կառավարությունը պնդել է, թե տեղեկություններ ստանալու վերաբերյալ դիմումատու ՀԿ-ի հարցումը վերաբերել է նաեւ այնպիսի «խիստ զգայուն տեղեկությունների, ինչպիսիք են համապատասխան գործամասերի համարները (եւ այդ գործամասերի հրամանատարների անունները)» (տե՛ս վերելում՝ 59-րդ պարբերությունը). սա, ըստ երեւույթին, վկայում է այն մասին, որ դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջված տեղեկությունների առնվազն մի մասը համարվել է ռազմական ոլորտին վերաբերող տեղեկություն, որը մյուս տեղեկությունների համեմատ առավել զգայուն տեղեկություն է եղել: Հաշվի առնելով հայեցողության այն լայն շրջանակը, որը տրամադրվում է

պետություններին՝ գնահատելու համար, թե տվյալ պահին իրենց երկրներում ինչն է վտանգ ներկայացնում ազգային անվտանգության համար (տե՛ս վերելում՝ 71-րդ պարբերությունում վկայակոչված համապատասխան նախադեպային իրավունքի սկզբունքները)՝ Դատարանը չի կարող կասկածի տակ առնել այդ գնահատականը: Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ դիմումատու ՀԿ-ն հայցել է տեղեկություններ նաեւ զինծառայողների անունների, ծննդյան ամսաթվերի եւ մահվան պատճառների վերաբերյալ՝ տեղեկություններ, որոնք Պաշտպանության նախարարությունը նախկինում արդեն իսկ տրամադրել էր (տե՛ս վերելում՝ 9-րդ եւ 74-րդ պարբերությունները), եւ որը սույն գործով վիճարկվող վարույթներից հետո տրամադրվել էր նաեւ Գլխավոր դատախազության կողմից (տե՛ս վերելում՝ 55-րդ պարբերությունը): Դատարանի կարծիքով, ինչպես ծննդյան փաստը, որը համարվել է հանրային ոլորտին վերաբերող իրադարձություն (տե՛ս վերոհիշյալ *Կուդերկը եւ Աշետ Ֆիլիպակի Գործընկերներն ընդդեմ Ֆրանսիայի* գործը, § 107), այնպես էլ մահվան փաստը, եւ հատկապես սույն գործի նպատակներով այն դեպքը, երբ մահը տեղի է ունեցել պետության իշխանության մարմինների բացառիկ վերահսկողության ներքո, հանդիսանում է հանրային ոլորտին առնչվող հարց:

77. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ տվյալ հարցի նկատմամբ զգալի հանրային հետաքրքրությունը (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը)՝ առավել կարելու էր, որ ներպետական դատարանները զգուշությամբ վերլուծեին դիմումատու ՀԿ-ի՝ տեղեկություններ հայցելու վերաբերյալ հարցումը՝ ըստ պահանջվող տեղեկությունների տարբեր տեսակների, եւ ներկայացնեին պատճառաբանություններ, թե ինչու էին հրաժարվում ՀԿ-ին մատչելիություն տրամադրելուց տեղեկությունների այն մասի նկատմամբ, որն այն հայցում էր: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել է վերելում, Վարչական դատարանը համաչափության մասով որեւէ վերլուծություն չի իրականացրել (տե՛ս վերելում՝ 75-րդ պարբերությունը. համեմատիր եւ հակադրիր այն վերոհիշյալ *Շեքսն ընդդեմ Խորվաթիայի* գործի հետ, § 70): Փոխարենը ներպետական դատարաններն իրենց քննությունն իրականացրելիս կենտրոնացել են հետեւյալ հանգամանքների վրա՝ i)

արդյոք դիմումատու ՀԿ-ի հարցումը վերաբերում էր գաղտնագրման ենթակա տեղեկությունների, ii) արդյոք հիմնավորված էր Պաշտպանության նախարարի կողմից համապատասխան Հրամանի ընդունումը (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 38-րդ պարբերությունները), որով «զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերն ու պատահարները, ինչպես նաեւ դրանց պատճառները» հստակորեն համարվում էին գաղտնագրման ենթակա տեղեկություններ (տե՛ս վերելում՝ 39-րդ պարբերությունը), եւ iii) արդյոք նա, ներպետական օրենքի համապատասխան դրույթների համաձայն, ուներ այդպիսի հրաման արձակելու համապատասխան լիազորություն (տե՛ս վերելում՝ 18-րդ, 20-րդ եւ 22-րդ պարբերությունները. տես նաեւ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի մարտի 6-ի որոշումը, որը վկայակոչված է վերելում՝ 40-րդ պարբերությունում):

78. Այն մասով, որով դիմումատու ՀԿ-ն պնդում էր, որ նշված Հրամանն անհիմն կերպով միջամտել է հանրային կարեւորություն ունեցող տեղեկությունները տարածելու իր իրավունքին (հաշվի առնելով, որ այդ Հրամանի կիրառմամբ դիմումատու ՀԿ-ի վարչական բողոքը կարճելը եղել է անկանխատեսելի. տե՛ս վերելում՝ 53-րդ եւ 66-րդ պարբերությունները), Դատարանը նշում է, որ թեւէ Հրամանի ընդունման փաստն ինքնին կարող էր որոշակիորեն վկայել կիրառելի իրավական դրույթների անորոշության մասին, որն իշխանությունները անհրաժեշտ էին համարել շտկել, այնուամենայնիվ, տվյալ Հրամանը որեւէ կերպ չի հանդիսացել այն միակ իրավական հիմքը, որի հիման վրա Վարչական դատարանը որոշել է Պաշտպանության նախարարությանը չպարտավորեցնել տրամադրելու հայցվող տեղեկությունները: Ինչպես նշվել է վերելում՝ 64-րդ պարբերությունում, Վարչական դատարանն իր որոշումը կայացնելիս հիմնվել է նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի վրա (տե՛ս վերելում՝ 29-րդ եւ 35-րդ պարբերությունները):

79. Ինչպես Դատարանը բազմաթիվ առիթներով նշել է, ներպետական

դատարաններին փոխարինելն իր գործը չէ, եւ ներպետական օրենքի մեկնաբանությունն ու կիրառումը հիմնականում վերապահված են ազգային իշխանության մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին (տե՛ս, բազմաթիվ այլ աղբյուրների շարքում, *Ռեկվենյի ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Rekvenyi v. Hungary* [GC]] գործը, թիվ 25390/94, § 35, ՄԻԵԴ 1999-III): Պատասխանող պետության օրենսդիր եւ կարգավորող մարմինների կողմից տվյալ ոլորտում իրավական կանոնների սահմանման համար ընտրված մեթոդների նպատակահարմարության վերաբերյալ կարծիք հայտնելը նույնպես Դատարանի իրավասության շրջանակում չէ: Դատարանի գործառույթը սահմանափակվում է այն հարցի որոշմամբ, թե արդյոք կիրառված մեթոդները եւ դրանց առաջացրած հետեւանքները համահունչ են Կոնվենցիային (տե՛ս *Գորժելիկը եւ այլք ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Gorzelik and Others v. Poland* [GC]] գործը, թիվ 44158/98, § 67, ՄԻԵԴ 2004-I):

80. Դատարանը նշում է, որ թիվ 2 վարչական վարույթի շրջանակներում Վարչական վերաքննիչ դատարանը մանրամասնորեն ուսումնասիրել է դիմումատու ՀԿ-ի փաստարկները (տե՛ս վերելում՝ 16-րդ եւ 53-րդ պարբերությունները) եւ եզրակացրել է, որ զինված ուժերում տեղի ունեցած միջադեպերի եւ պատահարների վերաբերյալ տեղեկությունները պետք է դիտարկվեին որպես զինված ուժերի մարտական պատրաստականությանը վերաբերող տեղեկություններ, իսկ այդպիսի տեղեկությունները, որոնք սահմանված են «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածով, համարվում են գաղտնագրման ենթակա տեղեկություններ (տե՛ս վերելում՝ 20-րդ եւ 35-րդ պարբերությունները): Դատարանը որեւէ հիմք չի տեսնում այդ մեկնաբանությունը կասկածի տակ առնելու համար:

81. Միեւնույն ժամանակ, Դատարանը նշում է, որ սույն գործի առանցքային հարցն այն է, թե արդյոք վիճարկվող միջամտությունն արդարացնելու նպատակով ազգային իշխանության մարմինների, մասնավորապես՝ ներպետական դատարանների (հաշվի առնելով դիմումատու ՀԿ-ի՝ տեղեկություններ հայցելու վերաբերյալ երրորդ հարցման մասով Պաշտպանության նախարարության

անգործությունը) կողմից ներկայացված պատճառաբանությունները եղել են «համապատասխան եւ բավարար» (տե՛ս «*Էնիմլ Դիֆենդերս Ինթերնեյշնլ*»-ն ընդդեմ *Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Animal Defenders International v. the United Kingdom* [GC]] գործը, թիվ 48876/08, § 100, ՄԻԵԴ 2013 (քաղվածքներ) եւ «*Դելֆի ԱՍ*»-ն ընդդեմ *Էստոնիայի* [ՄՊ] [*Delfi AS v. Estonia* [GC]] գործը, թիվ 64569/09, § 131, ՄԻԵԴ 2015):

82. Դատարանը գիտակցում է, որ ազգային անվտանգության համատեքստում՝ ոլորտ, որն ավանդաբար հանդիսանում է պետական ինքնիշխանության ներքին միջուկի մի մասը, կարող են լինել իրավիճակներ, երբ հնարավոր չէ ակնկալել, որ իրավասու մարմիններն իրենց պատճառաբանություններում կարող են տրամադրել նույնքան մանրամասներ, որքան, օրինակ, սովորական քաղաքացիական կամ վարչական գործերում: Գաղտնի փաստաթղթերի գաղտնագերծումը մերժելու համար մանրամասն պատճառներ ներկայացնելը կարող է հեշտությամբ հակասել այն նպատակին, որի համար այդ տեղեկություններն ի սկզբանե համարվել էին գաղտնագրման ենթակա (տե՛ս, *mutatis mutandis*, *Ռեգներն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [ՄՊ] [*Regner v. the Czech Republic* [GC]] գործը, թիվ 35289/11, § 158, 2017 թվականի սեպտեմբերի 19): Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Վարչական դատարանը չէր տրամադրել որեւէ բացատրություն այն հարցով, թե ինչու էր թույլ տվել գաղտնի պահել դիմումատու ՀԿ-ի կողմից պահանջվող ամբողջ տեղեկությունները, չի կարելի համարել, որ ներպետական դատարանները կիրառել էին այնպիսի չափանիշներ, որոնք համապատասխանում էին Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված ընթացակարգային սկզբունքներին, եւ որ ներպետական դատարանները կատարել էին այնպիսի «համապատասխան եւ բավարար» հիմնավորումներ տրամադրելու իրենց պարտավորությունը, որոնք կարող էին արդարացնել խնդրո առարկա միջամտությունը (տե՛ս վերոնշյալ *Յուրի Չումակն ընդդեմ Ուկրաինայի* գործը, § 47, ինչպես նաեւ համեմատիր եւ հակադրիր այն վերոնշյալ *Շեքսն ընդդեմ Խորվաթիայի* գործի հետ, § 71):

83. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

#### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41–ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

##### 84. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

##### Ա. Վնասը

85. Դիմումատու ՀԿ-ն նյութական եւ ոչ նյութական վնասի հատուցման մասով պահանջ չի ներկայացրել: Համապատասխանաբար Դատարանը պարտավոր չէ այս մասով որեւէ որոշում կայացնել:

## **Բ. Ծախսերը եւ ծախքերը**

86. Ղիմումատու ՀԿ-ն պահանջել է 2 287 եվրո՝ որպես Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի հատուցում: Այս պահանջը հիմնավորելու համար Ղիմումատու ՀԿ-ն Դատարանում իր ներկայացուցիչ պրն Մ. Շուշանյանի (տե՛ս վերելում՝ 2-րդ պարբերությունը) հետ կնքած՝ ըստ արդյունքի վարձատրության մասին պայմանագիր է ներկայացրել, համաձայն որի՝ Ղիմումատուն պարտավորվել է պրն Շուշանյանին վճարել 1 000 000 ՀՀ դրամ՝ Կառավարության կողմից ներկայացված փաստարկներին պատասխան պատրաստելու համար, եթե Դատարանը որոշում կայացնի իր օգտին:

87. Կառավարությունն այս պահանջները վիճարկել է:

88. Դատարանը նախկինում ճանաչել է ըստ արդյունքի վարձատրության մասին պայմանագրերի վավերականությունը՝ դատական ծախսերի համար փոխհատուցում շնորհելու նպատակով (տե՛ս Մնացականյանն ընդդեմ Հայաստանի [Mnatsakanyan v. Armenia] գործը, թիվ 2463/12, §§ 101 եւ 102, 2022 թվականի դեկտեմբերի 6): Ելնելով վերը նշվածից՝ Դատարանը գտնում է, որ Դատարանում կրած դատական ծախսերն իսկապես եւ պարտադիր կերպով կատարվել են հայտնաբերված խախտման համար փոխհատուցում ապահովելու համար: Այն նաեւ գտնում է, որ դրանց չափը ողջամիտ է:

89. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափորոշիչները՝ Դատարանը եզրակացնում է, որ Ղիմումատու ՀԿ-ի կողմից պահանջված գումարը ողջամիտ է, հիմնավորված է համապատասխան փաստաթղթային ապացույցներով եւ հետեւաբար պետք է բավարարվի: Այդ կապակցությամբ Դատարանը Ղիմումատու ՀԿ-ին տրամադրում է 2 287 եվրո՝ Դատարանում վարույթի ընթացքում իր ներկայացվածության հետ կապված իրավական ծախսերի փոխհատուցման համար՝ գումարած Ղիմումատու ՀԿ-ից զանձման ենթակա ցանկացած հարկ:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝**

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում.
3. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատու ՀԿ-ին վճարի 2 287 եվրո (երկու հազար երկու հարյուր ութսունյոթ եվրո)՝ կրած ծախսերի եւ ծախքերի մասով՝ գումարած դիմումատու ՀԿ-ից գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարի նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2025 թվականի դեկտեմբերի 4-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վիկտոր Սոլովեյշիկ՝

Քարտուղար

Կատերինա Շիմաչկովա՝

Նախագահ